ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի հուլիսի 9 -ի թիվ 303 - Ա

ԱՆՈՒՇ ՊԱՊԻԿՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՐԱՅԻ ԳՅՈՒՂԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 16-րդ հոդվածի 1-ին մասի 1.5 կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ հավելվածի 61-րդ կետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 20-րդ կետով և հիմք ընդունելով Անուշ Պապիկյանի 2026 թվականի հուլիսի 9-ի դիմումը.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Անուշ Քաջիկի Պապիկյանին 2026 թվականի հուլիսի 10-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Արայի գյուղի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ նրա հետ կնքելով ժամկետային աշխատանքային պայմանագիր մինչև հիմքի վերացումը:

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Արայի գյուղի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Անուշ Պապիկյանի վճարումն իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 7/13/2026 15:24:54 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

2026թ. հուլիսի
ք.Աշտարակ